

Պատուարժան Խմբագրություն ՄԱՐՄԱՐԱ Օրաթերթի

Շատ ցաւալի է որ գրիչները յոգնեցան Մելգոնեանի մասին գրելէ: Պոլսոյ Պատրիարքարանի կողմէ բացուած դատն ալ արդէն մերժուեցաւ: Ամերիկեան դատարանը ի՛նչ կը հասկնայ մեր ցաւերէն: Բայց ինչ որ կը տեսնենք մեր շուրջ, այն է թէ ինքզինք մամուլ կոչող զանգուածը լոեց վերջապէս:

Աստուած անոնց խիղճերը լուսաւորէ: Պր. Կարպիս Քէշիշօղլուի 14 Մայիս 2005ի գրութիւնը շատ քաղաքավար եւ տեղին էր: Ես զայն հեռատիպով որկեցի ՀԲԸՄի Վարչութեան նախագահ Պր. Պերճ Սեդրակեանին: Ուրախալի է որ Վեներտիկի Մուրատ Ռափայէլեան վարժարանի շէնքը վաճառքի չէ հանուած:

Տիկին Լաուրա Յովսէփեանի նամակը գլուխ գործոց մըն է մակերեսայնութեան եւ կամ արհամարհանքի՝ մեր իրաւ ազգային արժէքներուն նկատմամբ: Ասոնք կը կրկնեն, առանց մտածելու, ինչ որ «Վարդապետն ասաց»: Անոնց ազգապահպանման լոգունգներն ալ կորսնցուցած են իրենց իմաստը, անոնց միակ մտասուեռումն է - Մելգոնեանի հողը ծախելով-100-150 միլիոն տուար մը գրպանել, ինչ որ կարծես շահուած է իրենց ճակտի քրտինքով:

Հայերէն լեզուն ու հայ մշակոյթը կա՛ն ու կը մնան մեր գոյապայքարի առաջին գիծերուն վրայ: 17 Մայիս 2005ի Ռ. Հատտէճեանի յօդուածէն աւելի տրամաբանական եւ համոզիչ գրութեան մը չեմ հանդիպած: Ան, իրաւամբ կը մատնանշէ թէ «Հայաստան պէտք չունի Մելգոնեանին, Սփիւռքն է որ պէտք ունի Մելգոնեանին»:

Արեւու պէս պայծառ գաղափարներ:

Կ'արժէ որ այս յօդուածը իր ամբողջութեան մէջ արտասպառի բոլոր հայ թերթերու եւ մամուլի կողմէ, որպէսզի անհաւատներ ապաշխարեն:

Տիկին Լաուրա Յովսէփեանի երկրորդ նամակը նորութիւն մը չի բերեր: Յայտնի է որ ազնի Տիկինը բաւական անտեղեակ է մեր հարցերուն եւ կարծես ի՛նք միայն հայրենասէր է եւ Հայաստանը կը սիրէ:

Պր. Կարպիս Քէշիշօղլուի բոլոր առարկութիւններն ալ տեղին են ու քիչ մըն ալ աւելի: Տիկին Յովսէփեան տակաւին չէր ծնած, երբ մենք Նոր Այնթապի մէջ (Հայաստան) կառուցեցինք ժանեակի գործարան մը, որ զո՞ն գնաց սեփականաշնորհման: Այս բառը իր մէջ կ'ամփոփէ մեր ժամանակակիցներու մեծագոյն կողոպուտը: Բայց մենք մնացինք նոյն անոպայ հայրենասէրները եւ տակաւին կը շարունակենք մեր ծառայութիւնները:

ՀԲԸՄի (62 տարուայ անդամ եմ) դպրոցները «դրամ շինելու» համար չեն ստեղծուած եւ ՀԲԸՄը երբեք ալ իրաւունք չունի Մելգոնեանը փակելու, ընդհակառակը, զայն պէտք է համալսարանի վերածէ:

Ազգին դրամն է, ազգին պէտք է վերադարձուի:

Բայց կ'երեւի թէ մեր բոլորին խօսքերը կ'իյնան խոպան հողերու վրայ...

Հագար ափսո՛ս....:

ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

(Պէյրուք)